«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ «ԳՀԱՊՁԲ-2018/16-4-1-ԵՊԲՀ»

ք.Երևան « 09 » « ապրիլ » 2018թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ա.Ա.Մուրադյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Նատալի Ֆարմ» ՍՊ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Ա.Ասատրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ստանալ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 14.543.425,00 /տասնչորս միլիոն հինգ հարյուր քառասուներեք հազար չորս հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագրի մասով Վաճառողը Ապրանքի մատակարարումը իրականացնում է միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Գնորդի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2	ՀՀ, ք.Երևան, Տիչինայի 3-րդ նրբ. 2/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 11500166513800	Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01503448	ՀՎՀՀ 01222567
Ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյան	էլ. հասցեն՝ natalipharm@bk.ru
	Հեռ. (010) 744212
	Գլխավոր տնօրեն՝ Ա.Ասատրյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Մ.Տ	Մ.Տ

Հավելված N 1
«09» «04» 2018թ կնքված
«ԳՀԱՊՁԲ-2018/16-4-1-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	Չափ մաս միավորը	Միավոր գինը /ՀՀ դրամ	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
3	33141136	Կաթետեր ասպիրացիոն 14Fr	Հուայան Էնջել Մեդիքալ Ինդաստրիեթ, Չինաստան	Ասպիրացիոն կաթետեր N 14, մակերեսներն:	հատ	37,00	40.700.00	1100	ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	1100	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
6	33121180	Ճնշաչափ աներոիդ ստետոսկոպով	Չինաստան	Ճնշաչափ ստետոսկոպով ՁՀ չափման սարք, գուլիչով, մոնժետով, ստետոսկոպով:	հատ	2.650.00	145.750,00	55	ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	55	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում

7	33141136	Միզային կաթետեր ֆոլի 12Fr	Եվրոմեդ, Չինաստան	Միզային կաթետր Ֆոլի, երկֆյուտ, 12Fr, սիլիկոնապատ:	հատ	165.00	12.375.00	75	ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	75	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի 20 օրացույցային օրվա ընթացքում
8	33141136	Միզային կաթետեր ֆոլի 14Fr	Եվրոմեդ, Չինաստան	Միզային կաթետր Ֆոլի, երկֆյուտ, 14Fr, սիլիկոնապատ:	հատ	165,00	132.000,00	800	ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	800	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի 20 օրացույցային օրվա ընթացքում
9	33141136	Միզային կաթետեր ֆոլի 16Fr	Եվրոմեդ, Չինաստան	Միզային կաթետր Ֆոլի, երկֆյուտ, 16r, սիլիկոնապատ:	հատ	165.00	132.000,00	800	ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	800	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի 20 օրացույցային օրվա ընթացքում
10	33141136	Միզային կաթետեր ֆոլի 18Fr	Եվրոմեդ, Չինաստան	Միզային կաթետր Ֆոլի, երկֆյուտ, 18r, սիլիկոնապատ:	հատ	165.00	6.600.00	40	ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	40	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի 20 օրացույցային օրվա ընթացքում

11	33141157	Շեղբ վիրահատական N11	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ, Չինաստան	Շեղբ վիրահատական (նշտարի տայր) N11, չժանգոտվող մետաղից: Փաթեթավորումը տուփով, տուփում 100 հատ:	հատ	12,80	83.200,00	6500	ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	6500	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
12	33141157	Շեղբ վիրահատական N23	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ, Չինաստան	Շեղբ վիրահատական (նշտարի տայր) N23, չժանգոտվող մետաղից: Փաթեթավորումը տուփով, տուփում 100 հատ:	հատ	12,80	44.800,00	3500	ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	3500	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
14	33141211	Ջերմաչափ	Եվրոմեդ, Չինաստան	Ջերմաչափ մարմնի ջերմաստիճանը չափելու համար, սնդիկային, չափման դիապազոնը՝ 32-42°C: Չափը M-125մմ, պաշտպանիչ պատյանով:	հատ	249,00	199.200,00	800	ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	800	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
16	33141143	Սկարիֆիկատոր՝ ստերիլ, պլաստմասե	Չանգժու Յուանդոնգ Մեդիքալս Էքվիպմենթ, Չինաստան	Սկարիֆիկատոր՝ մատծակիչ արյան անալիզ վերցնելու համար, միանվագ օգտագործման. պլաստմասե, ստերիլ: Ունի փոքրիկ, շատ նուրբ և բարակ ասեղ (ասեղի չափերը՝ 25G-30G, ըստ պատվիրատուի պահանջի), որը պատված է պլաստմասե գլխիկով: Փաթեթավորումը տուփով, տուփում 200 հատ:	հատ	3,38	101.400,00	30000	ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	30000	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում

17	33141160	Սոնոգրաֆիայի գել (սոնո գել) 250մլ	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրումենթ, Չինաստան	Սոնոգրաֆիայի գել, 250մլ:	հատ	247.00	296.400,00	1200	ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	1200	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
19	33141145	Սպինալ անզգայացման ասեղ 25G, ինտրադյուսերով	Պենկան C-25 (4502043), Բ.Բրաուն, Գերմանիա	Սպինալ անզգայացման ասեղ 25G, ինտրադյուսերով, Sprotte տիպի ծայրով, երկարությունը՝ 90մմ, տրամագիծը՝ 0.5մմ, ինտրադյուսերը՝ 0.8մմ: Որակի սերտիֆիկատի/ների առկայություն:	հատ	1.950,00	702.000,00	360	ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	360	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
37	33141211	Սավան ներծծող 90սմx90սմ	Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրումենթ, Չինաստան	Սավան ներծծող /սավան միանվագ/, չափը՝ 90սմx90սմ, բարակ պոլիէթիլենային, գրեթե ամբողջությամբ պատված է բամբակե սպունգանման ներծծող ծածկով, արտաքինից պատված է թավշյա ծածկով: Գաթեթավորումը տուփով, տուփում 10 հատ:	հատ	165,00	495.000,00	3000	ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	3000	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում

43	33141211	Ծալովի հիդրոֆոբ ակրիլային միաբաղադրիչ ետինխցիկային ներակևային արհեստական ոսպնյակ, մանուշակագույն և կապույտ լույսի զտիչներով, ասֆերիկ	Acrysof IQ Bicon (SN60WF) ASN, Ակոն, ԱՄՆ	Ծալովի հիդրոֆոբ ակրիլային միաբաղադրիչ ապագնդային ինտրաօկուլյար եռխցիկային ոսպնյակ ուլտրամանուշակագույն և կապույտ լույսի նկատմամբ ակրիլատֆթ տեսակի զտիչներով, ասֆերիկ: Միաբաղադրիչ ինտրաօկուլյար ոսպնյակը կազմված է 2-ֆենիլէթիլակրիլատից և 2-ֆենիլէթիլմետակրի լատից հատուկ տեսակի քլոռոֆորով, S-աձև հապտիկայի առկայությամբ և ամբողջ երկայնքով քառակուսի եզրերով: Հապտիկական էլեմենտի ձը՝ մոդիֆիկացված L տեսակի (ModifiedL): ՈՒՄ ճառագայթների նկատմամբ ֆիլտր-բլոկատորի և վտանգավոր կապույտ լույսի նկատմամբ ֆիլտրի առկայությունը գրեթե թույլ չեն տալիս վտանգավոր ճառագայթների ներթափանցումը: Օպտիկական մասի չափը՝ 6մմ: Ընդհանուր երկարությունը՝ 13մմ: Հնարավոր օպտիկական ուժը՝ +6.0-30.0 D կես դիոպտրիայով, և +31.0-34.0 D՝ մեկ դիոպտրիայով: Օրիգինալ: Ինֆինիտի Վիժն Միստեմ սարքի ներարկիչի միջոցով ներարկվող: Կախված վիրահատվող աչքի անատոմիական առանձնահատկություններից չափսերը ըստ պատվիրատուի պահանջի:	հատ	57 000.00	8 550 000.00	150	ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	150	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում

45	33141211	Ակնաբուժական քարթրիջ "D"	Monarch III D 8065977763, Ալկոն, Բելգիա	Ակնաբուժական քարթրիջ D, Թոնակի D տեսակի քարթրիջ Monarch III տեսակի ինտրաօկուլյար ոսպկակների ներարկման համար, մեկ անգամյա օգտագործման: Օրիգինալ:	հատ	3.400.00	612.000,00	180	ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	180	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
47	33141211	Ակնաբուժական վիսկոէլաստիկ նյութ ստերիլ ներարկիչի մեջ	Դիսկովիսկ Լ-թ 1.0սլ, Ալկոն, Բելգիա	Կոգեզիվ-դիսպերսիվային ակնաբուժական վիսկոէլաստիկ ստերիլ կնութ ստերիլ ներարկիչի մեջ, մեկանգամյա օգտագործման. 1մլ տարողությամբ: Ստերիլ կնութը (լուծույթը) բաղկացած է 4% իսնոդոքսին նատֆատից և 1.65% նատրիումի հիալուրոնատից: Կոգեզիվ դիսպերսիվային ինդեքսը 10-14 (CDI), մածուցիկությունը՝ մոտ 80000 cps, օսմոլյարությունը՝ 315±40 մՕսմ/կգ: Ունի փակվող օղակ, որն անվտանգ ֆիքսում է կանուլան: Օրիգինալ:	հատ	26.000.00	2.080.000,00	80	ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	80	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
50	33141112	Ստերիլ սպեղանի ակնավիրաբուժական	Վիրահատական ստերիլ սպեղանի (8065105620), Ակոն, ԱՄՆ	Ստերիլ սպեղանի ակնավիրաբուժական՝ կպչուն պոլիէթիլենից, 11.5սմx12սմ չափի (օպերացիոն դաշտը հերմետիկ պահելու համար): Օրիգինալ: Ոսպկի սերտիֆիկատի/ների առկայություն:	հատ	2.400.00	480.000,00	200	ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	200	2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում

51	33141155	Դանակ ակնավիրաբուժական երկսայր	Դանակ Clearcut HP2 2.4 AMG (8065982465), Ալկոն, Բելգիա	Դանակ ակնավիրաբուժական երկսայր (Dual Bevel տեսակի), թեք, կոր, ստերիլ, մեկանգամյա օգտագործման: Շեղբը՝ 2.4մմ լայնությամբ: Օրիգինալ: Որակի սերտիֆիկատի/ների առկայություն:	հատ	5,000.00	30,000.00	6	ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	6	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
52	33141112	Ակնավիրաբուժական վիրահատական ստերիլ սպեղանի՝ հեղուկի ընդունման պարկով	Ալկոն, ԱՄՆ	Ակնավիրաբուժական վիրահատական ստերիլ սպեղանի՝ հեղուկի ընդունման պարկով, մեկանգամյա օգտագործման: Իրենից ներկայացնում է միկրոդաջված (միկրոռիդուսված) պոլիմերային կտոր: Չափը՝ 102x122սմ, ուղղանկյունաձև կտրվածքով: Կտրվածքի չափը՝ 13x10սմ, ինքնասոսնձվող եզրագծերով: Կտրվածքի եզրին ունի պլաստիկե տոպրակ (պարկ), հեղուկի հավաքման համար: Օրիգինալ: Որակի սերտիֆիկատի/ների առկայություն:	հատ	4,000.00	400,000.00	100	ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով	100	2018 թվականին միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ							14,543,425.00				

*

1. Պարտադիր պայման է՝ ապրանքի չօգտագործված լինելը:
2. Սույն պայմանագրի մասով Վաճառողը Ապրանքի մատակարարումը իրականացնում է միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի: Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաթանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաթանակի մասով պայմանագիրը լուծվում է:
3. Այն ապրանքատեսակների մասով, որոնց համար կիրառելի է պիտանելիության ժամկետ, անհրաժեշտ է, որ այդ ապրանքատեսակները մատակարարման պահին ունենան ապրանքի ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն 70 տոկոսը:

***Առաջին փուլի մատակարարման ժամկետը, սահմանվում է 20-22 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պարմանն ուժի մեջ մտնելու օրը:*

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
ՀՀ Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2	ՀՀ, ք.Երևան, Տիչինայի 3-րդ նրբ. 2/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
h/h 11500166513800	Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01503448	ՀՎՀՀ 01222567
Ընկերության Ա.Ա.Մուրադյան	էլ. հասցեն՝ natalipharm@bk.ru
	Հեռ. (010) 744 212
	Գլխավոր տնօրեն՝ Ա.Ասատրյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«09» «04» 2018թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2018/16-4-1-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	33141136	Կաթետեր ասպիրացիոն 14Fr	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
6	33121180	Ճնշաչափ աներոիդ ստետոսկոպով	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
7	33141136	Միզային կաթետեր ֆոլի 12Fr	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
8	33141136	Միզային կաթետեր ֆոլի 14Fr	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
9	33141136	Միզային կաթետեր ֆոլի 16Fr	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
10	33141136	Միզային կաթետեր ֆոլի 18Fr	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
11	33141157	Շեղբ վիդեոատեսական N11	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

12	33141157	Շեղոք վիրահատական N23	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
14	33141211	Ջերմաչափ	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
16	33141143	Սկարիֆիկատոր՝ ստերիլ, պլաստմասե	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
17	33141160	Սոնոգրաֆիայի գել (սոնա գել) 250մլ	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
19	33141145	Սպինալ անզգայացման ասեղ 25G, ինտրադյուսերով	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
37	33141211	Սավան ներծծող 90սմx90սմ	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
43	33141211	Ծալովի հիդրոֆոբ ակրիլային միաբաղադրիչ ետիկսցիկային ներակնային արհեստական ոսպնյակ, մանուշակագույն և կապույտ լույսի զտիչներով, ասֆերիկ	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
45	33141211	Ակոաբուժական թաթարիջ "D"	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
47	33141211	Ակնաբուժական վիսկոէլաստիկ նյութ ստերիլ ներարկիչի մեջ	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
50	33141112	Ստերիլ սպեղանի ակնավիրաբուժական	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

51	33141155	Դանակ ակնավիրաբուժական երկսայր	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
52	33141112	Ակնավիրաբուժական վիրահատական ստերիլ սպեղանի՝ հեղուկի ընդունման պարկով	-	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով ըստ մատակարարված քանակների:*

ԳՆՈՐԴ

«Երևանի Մխիթար Հերացու
անվան պետական բժշկական համալսարան»
հիմնադրամ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Գլխավոր տնօրեն Մ.Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Տիչինայի 3-րդ նրբ. 2/2
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
էլ. հասցեն՝ natalipharm@bk.ru
Հեռ. (010) 744 212
Գլխավոր տնօրեն՝ Ա.Հսատոյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
« » « » 2018թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2018/16-4-1-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« » « » 2018թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2018/16-4-1-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N ___
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
Վաճառողի անվանումը
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն